# ԴՎԻՆԸ ՎԱՂ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՇՐՋԱՆՈՒՄ
## (Ուրվագծման փորձ)

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

*Արտաշիսյան շրջանի Դվինը հնագիտորեն բացահայտված և դրված է գիտական շրջանառության մեջ: Մինչդեռ վաղ Արշակունյաց շրջանը այստեղ ներկայանում է հատվածաբար*[1]*: Այդ պարագայում առանձնանում է համաժամանակյա, փոխկապակցված հնագիտական նյութերի մի խումբ՝ բազալտե ծածկասալ*[2] *(նկ. 5), հար և նման Գառնիի հեթանոսական տաճարի տանիքի ծածկասալերին (նկ. 6), նմանօրինակված Արտաշատի I–II դդ. ելունավոր կղմինդրներից*[3]*, բազալտե սրբատաշ որմնասալեր՝ թվով 3 հատ, շարված կաթողիկեի նախնական՝ IV դ. եռանավ շինության հիմքերում, բազալտե զոհասեղան*[5] *(նկ. 1)՝ Հռոմեական կայսերական շրջանի միթրայական կոթող, միջանկյալ շինարարական շերտ՝ (նկ. 7)՝ ուղղանկյուն կա-*

---

1 Գ. Քոչարյան. Դվին III. Դվինը անտիկ դարաշրջանում. Երևան, 1991.

2 1965 թ. Ս. Գրիգոր կաթողիկե եկեղեցուց մոտ 15 մ արևմուտք հայտնաբերվել է ծածկասալի մի հատված (տե՛ս Գ. Քոչարյան. Ծածկի քարե սալ Դվինից.– «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, №11, էջ 102 –105), իսկ 1989 թ.՝ նույնի երկրորդ հատվածը: Երկայնակի բարձր կողերով, լայնակի եզրը թեթևակի բարձրացող թեք ելունով, սրան համահավասար՝ կողերը արտաքուստ որոշակի հաստացումով, ուղղանկյուն տափակ սալի մի հատված, թերի, կոտրված (52 X 23,5° X 3,5 սմ, կողի բարձր. 4 սմ, լայն. 2 – 3 սմ, ելունի լայն. 9,5 սմ, բարձր. սալի մակերեսից՝ 2 սմ), ըստ Գառնիի տաճարի ծածկասալերի չափերի (52 X 72 X 3–4 սմ. տե՛ս Ա. Ա. Սահինյան. Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը. Երևան, 1983, էջ 173 – 174, նկ. 99 ա, բ) կարելի է վերականգնել սալի երկարությունը՝ մոտ 70–72 սմ:

3 А. Г. Канеця н. Античные черепицы из раскопок Арташата.– "Советская археология", 1981, №1, с. 185–188.

4 Ս. Գրիգոր կաթողիկե եկեղեցու կոնսերվացիայի ամերիկյան ծրագրի համաձայն՝ 1992–1993 թթ. կատարված հետախուզական բնույթի պեղումների ժամանակ արևմտյան մասում բացված՝ IV դ. եռանավ շինությանն առնչվող պատերի հյուսիսարևելյան մի հատվածում՝ կապտավուն բազալտե, երկչար սրբատաշ սալերը՝ 0,72 մ ընդհանուր բարձրությամբ (վերին սալի երկար. 1,6 մ, հաստ. 0,76 մ), դրված էին մ.թ.ա. I հազարամյակի սկզբի չիկավուն խճի շերտի վրա՝ շարունակությունը շարված սպիտակ ավազաքարով (տե՛ս Գ. Քոչարյան. 1992 թ. պեղումների դաշտային օրագիր. պահվում է Դվինի հնագիտական կայանում):

5 Զոհասեղանի (բարձր. 55 սմ, միջին մասում նեղացող, հիմքում և վերին մասում լայնացող ուրվապատկերով՝ 17,5X17,5–25X15–25X11 սմ) մասին տե՛ս Գ. Քոչարյան. Անտիկ դարաշրջանի զոհասեղան Դվինից.– «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1977, №2, էջ 280–286: Նույնի՝ Անտիկ Դվինը Արտաշատի պաշտպանական համակարգում.– «Հանդես ամսօրյա», 1996, №1–12, էջ 252–253:

6 Այստեղ մասնակիորեն պեղվեցին ուղղանկյուն կառույցի հիմքեր: Հնարավոր չեղավ բացահայտել հնագիտական միջավայրը՝ եկեղեցու առկայության պատճառով: Քննվող շերտը բացակայում է եկեղեցուց դուրս, որը կարող է պայմանավորված լինել հետագա ավերումով: 1,36 մ լայնությամբ քարե հիմքով շինությունը պետք է որ ունեցած լինի բարձր պատ և հատակագծում զգալի չափեր: Պեղված հատվածն անբավարար է շինության բնույթի մասին հիմնավոր դատողություններ անելու համար: Այսուհանդերձ, մ.թ. I դ. կե-

*ռույցի հիմքերով (1,36 մ լայն.), բլրի գագաթի IV դ. մեծ եռանավ եկեղեցու և Արտաշիսյան շրջանի՝ I գ. կեսերին հրկիզված շինության մակարդակների միջև, բլրի գագաթը պատնեշող՝ քառանկյուն և կիսաբոլոր աշտարակներով պարսպագոտու հիմքեր*[7]:




---

*սերին՝ Արտաշիսյան շրջանի շինությունն ավերվելուց հետո, մինչև IV դ. մեծ եռանավ եկեղեցու կառուցելը, այստեղ ակնհայտ է որոշակի կառույցի գոյության փաստ. սրա մասին տե՛ս Գ. Ք ո չ ա ր յ ա ն. Անտիկ Դվինը Արտաշատի..., էջ 351:*

*7 Պարսպագոտու հիմքերը՝ շարված զանգվածեղ քարերով, ամրացված մանր գետաքարերի լիցքով և հողե շաղախով, որոշ հատվածներում պահպանել են 3,0–5,0 մ լայնությամբ հաստահեղույս հում աղյուսե վերնամասի հետքեր. բացվել են հարավային մասում քառանկյուն հատակագծով աշտարակի կիկլոպյան շարվածքով հիմքի մնացորդներ, մոտավոր չափերը՝ 5,0X3,20 մ (տե՛ս Գ. Ք ո չ ա ր յ ա ն. Անտիկ Դվինը Արտաշատի..., էջ 346–347), իսկ արևելյան հատվածի հում աղյուսե միջուկի մեջ՝ միջին չափի գետաքարերով, կանոնավոր, աստիճանաձև շարված, կորագիծ, գոգավոր կառույց (8 շարք, 1,6 մ բարձր.): Ըստ արշավախմբի ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանի՝ ներսից երեսապատված այս բրգաձև կառույցը (արտաքին շարվածքը չի պահպանվել, քանդված է) աշտարակ է մտած պարսպի հում աղյուսե վերնամասի մեջ: Պարսպի պահպանված հատվածների և անմիջականորեն կից շինությունների առնչությունների շերտագրական մանրակրկիտ վերլուծությամբ բացահայտված է պարսպի և բնակավայրի գոյության հիմնական շրջափուլերի համապատասխանությունը սկսած, թերևս, մ.թ.ա III հազարամյակից, մ.թ.ա. I հազարամյակի սկզբին, Արտաշիսյան և Արշակունյաց շրջաններում մինչև IX դ. մեծ երկրաշարժը (տե՛ս* A. K a l a n t a r i a n. Dvin. Histoire et archeologie de la ville medievale. Paris, 1996, pp. 55–57*):*

*Առկա նյութերի համեմատական վերլուծությունը պատմաքաղաքական իրադրության համատեքստում հնարավորություն է ընձեռում ուրվագծել որոշակի մի ժամանակահատված: Այս առումով մեծ տեղեկատվություն է պարունակում հատկապես Հռոմեական կայսերական շրջանի բազալտե զոհասեղանը: Հաղորդակցության ուղիների հանգուցակետերում բենեֆիցիարիուսների հիմնած պահակակետերը* (statio) *Հադրիանոս կայսեր գահակալման տարիներին (117-138) միայն տարածում գտան և հռոմեական ինտենսիվ ռազմական օկուպացիոն գործունեությանը զուգընթաց՝ III դ. խիտ ցանց կազմեցին կայսրության հատկապես արևմտյան նահանգներում: Որպես ուղեցույց-ուղեկալներ սրանք հսկում էին երթևեկությունը, ապահովում զորակայանների միջև հաղորդակցության անվտանգությունը և պահպանում տարածաշրջանի խաղաղությունը: Ամրոցի պարսպից դուրս՝ անմիջապես ճանապարհի վրա տեղադրված պահակակետը տեղի սրբավայրի հետ կազմում էր մի ամբողջություն: Այստեղ կառուցվում էր նոր տաճար կամ ուղղակի դրվում էին Դվինում գտնվածին համանման, տարբեր աստվածությունների ձոնված զոհասեղաններ (նկ. 3, 4) (հմմտ. նման պահակակետերի բազմաթիվ օրինակներ հատկապես Դանուբյան, Մերձհռենոսյան շրջաններում, ինչպես նաև Ղրիմում՝ Խարաքս ամրոցի մ.թ. II-III դդ. statio-ն)*[8]:

*Միթրային ձոնված Դվինի զոհասեղանի երկու հանդիպակաց կողերի բարձրաքանդակները՝ արև խորհրդանշող սկավառակ և թռչուն (նկ. 1ա, գ), մյուս երկուսին՝ ցլի գլուխ և շոշափուկներով [ցլի] ամորձիք բռնած կարիճ (նկ. 1 բ, դ): Սրանք Հռոմեական կայսրության սահմաններում ձևավորված՝ Սիրիայի, Հռոմի, Իտալիայի, Հարավարևելյան և Միջին Եվրոպայի հուշարձաններում բազմիցս ներկայացված, միթրայական պատկերագրության մեջ ամենատարածված ու ամենասիրված թեմայի՝ Միթրայի՝ ցլի հետ մենամարտի տեսարանի խորհրդապատկերներն են*[9]: *Սրանցից ցուլը, թռչունն ու արևը, առանց շոշափուկներով [ցլի] ամորձիք բռնած կարիճի, կարող էին վերագրվել դիցաբանական տարբեր ավանդությունների, սակայն գաղափարագրական հակիրճությամբ ներկայացված այս քառյակը միասին վերցրած խոսում է Միթրա < արևագռավ-ցուլ-կարիճ իմաստաբանական շղթայի ամբողջության մասին: Այստեղ իմաստային հիմնական շեշտը կրում է «ցլի ամորձիք սեղմող կարիճ» գաղափարագիրը, որը մերձենում է Սիդոնի (II դ. երկրորդ կես) և հատկապես Հռոմի (ոչ ուշ, քան 172 թ.) բարձրա-*

---

8 *Բենեֆիցիարիուսների* statio-*ները բնութագրված են ըստ՝* М. И. Ростовцев. Святилище фракийских богов и надписи бенефициариев в Ай-Тодоре.— "Известия Археологической комиссии", вып. 40, СПб., 1911, с. 1—40; В. Д. Блаватский. Харакс.— "Материалы и исследования по археологии СССР", №19, М., 1951, с. 256–257, 291; Э. И. Соломоник. Алтарь Немесиды из Херсонеса.— «Вестник древней истории» (далее — ВДИ), 1960, №2, с. 133—139.

9 *Գ. Քոչարյան. Դվին III..., էջ 65–67.*

*քանդակների ցլասպան հերոսի ուղեկից կարիճի պատկերին*[10] *(նկ. 2): Ժամանակագրորեն այս աղերսները համընկնում են բենեֆիցիարիուսների համանման ղոհասեղանների տարածման ժամանակի՝ II դ. կեսերի հետ: Այսինքն ուրվագծվում է Հռոմեական կայսերական շրջանին բնորոշ այս կոթողի Հայաստանում հայտնվելու ամենահավանական ժամանակը՝ II դ. կեսերը, երբ Հռանդեայի դաշնագրով (63 թ.) հաստատված* status quo*-ն պարթևները խախտեցին, որին ի պատասխան հռոմեացիները 163 թ. նվաճեցին Հայաստանը: "*Armeniacus *պատվանունը ստացած կայսր Մարկոս Ավրելիոսի (161–180) և կայսերակից Լուկիոս Վերոսի (161–169) գահակալման առաջին իսկ տարիներին՝*

*– հռչակվեց Վաղարշապատ-Կայինեպոլիսը (Արտաշատի փոխարեն) նոր մայրաքաղաք և վերածվեց հռոմեական զորակայանճամբարի (այստեղ հայտնաբերված հունարեն և լատիներեն վիմագիր արձանագրությունները վկայում են՝ 163 թ. ի վեր, շուրջ 30 տարի,* XV Apollinaris*–ի նաև* XIII Fulminata*-յի զորամիավորումների ռազմական բնույթի շինարարական գործունեության մասին),*

*– Հռոմի ծերակուտական և հյուպատոս, «հայերից և պարթևներից հալածված» Սոհեմոսը վերահաստատվեց հայոց գահին (164-186),*

*– վերակառուցվեցին և գրվեցին հռոմեական կայազորների հսկողության տակ երկրի քաղաքական կենտրոնի՝ Արարատյան հովտի ռազմական հենակետերը (Արտաշատը, Վաղարշապատը, Գառնին...)''*:

*Ռազմավարական և առևտրական միջազգային կարևորության Մեոթիդա-Կողքիսյան և դեպի Վիրք տանող հյուսիսային մայրուղիների խաչմերուկում*[12]*, տվյալ տարածաշրջանում հռոմեական օկուպացիայի կենտրոնական Վաղարշապատ–Արտաշատ–Գառնի զորակայանների ռազմավարական հանգուցակետում՝ բլրի գագաթին «ամրոց-բնակավայրով», ստորոտին պարսպից դուրս, ճանապարհին անմիջապես կից իր ավանդական սրբավայրով, Դվինը կատարելապես համապատասխանում էր բենեֆիցիարիուսների պահակակետերը բնութագրող բոլոր չափանիշներին: Թե՛ զորակայանների միջև հաղորդակցություն ապահովելու և թե՛ ռազմավարական ու տնտեսական կարևորություն ունեցող այս տարածքը հսկողության տակ պահելու առումով (հմմտ. բենեֆիցիարիուսների պարտականությունները հռոմեական նահանգում՝ Պանոնիայում)*[13] *Դվինը, թերևս, արժանացավ օկուպացիոն հռոմեական բանակի բենեֆի-*

---

10 L. A. C a m p b e l l. Mithraic iconography and ideology. Leiden, 1968, p. 25–28, pl. V, 75, XV, 650.

11 *Ժամանակաշրջանը ներկայացված է ըստ՝ Հ. Յ. Ա ս տ ո ւ ր յ ա ն. Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի և Հռոմի. Վենետիկ, 1912, էջ 216–224, տե՛ս նաև Տ. Բ ո ղ ա ր յ ա ն. Անտիկ Դվինը Արտաշատի..., էջ 350 :*

12 *Գ. Ք ո չ ա ր յ ա ն. Անտիկ Դվինը Արտաշատի..., էջ 351:*

13 Ю. К. К о л о с о в с к а я. Паннония в I—III веках. М., 1973, с. 231.

ցիարիուսների ուշադրությանը: Ժամանակին բնորոշ քառանկյուն և կիսաբոլոր աշտարակներով զուգակցված պարսպագոտիով (հմմտ. Արշակունյաց շրջանի Հացավան ամրոցը)[14] պաշտպանված Դվին ամրոցի բարձունքին, հնարավոր է, հռոմեացիների կողմից կառուցված է եղել ուղղանկյուն հատակագծով հրամանատարական դիտակետ[15], որն իր գերիշխող դիրքից տեսադաշտի մեջ էր պահելու շրջապատը և հսկելու էր Ազատ գետի կիրճով դեպի արքունի ամրոց-ամառանոց, մշտապես «կայան զօրացն» Գառնի ձգվող ճանապարհը: Իսկ ամրոցի պարիսպներից դուրս, Վաղարշապատ-Արտաշատ ճանապարհին՝ «Բուն պողոտային» անմիջապես հարող տարածքում, որտեղ գտնվում էր Դվին ավանդապահ սրբավայրը, հնարավոր է, տեղադրված է եղել ոստիկանական ուղեցույց-ուղեկալ՝ իր բնորոշ զոհասեղանով, որը ձոնված էր Միթրային:

Հռոմեական լեգեոններում՝ Եփրատից մինչև Հռենոս, մեծ հռչակ ուներ Միթրան, և՝ նրա պաշտամունքի առաջին հետքերը, և՝ լայն տարածումը Եվրոպայում փաստագրվում են հատկապես Դանուբյան նահանգներում[16], իսկ Ֆր. Կյումոնի կազմած Միթրայի միստերիաների տարածման քարտեզի համաձայն՝ Փոքր Ասիայում միթրաիզմի առավել մասսայականությամբ աչքի էր ընկնում հատկապես Կապադովկիան[17]. Այս առումով ուշադրավ է, որ II դ. երկրորդ կեսին Հայաստանը օկուպացրած զորքը շուրջ 30 տարի անընդմեջ, հրամանատարական կազմով ապահովող XV Apollinaris-ը մինչև այստեղ գործուղվելը տեղակայված էր Կապադովկիայում և Փոքր Հայքում, սրանից էլ շատ առաջ՝ I դ. Դանուբյան նահանգներում[18]: Իսկ հռոմեական պաշտոնական գիցարանում «ռոմանականացված» արևելյան աստվածությունների (Կիբելե, Սերապիս, Իզիդա...) թվում նաև Միթրայի պաշտամունքի տարածումը՝ կայսեր և նրա շրջապատի վարած հովանավորչական ակտիվ քաղաքականության արդյունք էր[19]: Ըստ հետազոտողների ընդհանուր կարծիքի, միթրայիզմը «իշխանավորների կրոնն» էր և դրա հետևորդները հիմնականում զինվորական բյուրոկրատական ապարատի ներկայացուցիչներն էին[20]: Ուրեմն բնական է՝ զինծառայությունը զորային դրասենյակում կամ

---

14 Գ. Տիրայան. Հացավան ամրոցի 1963 և 1965 թթ. պեղումների նյութերից.– ՊԲՀ, 1968, №1, էջ 282–286: Հ. Պ. Հակոբյան. Մեծ և Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգը.– ՊԲՀ, 1986, N 4, էջ 146–149:

15 Տե՛ս ծանոթ. 6 և 7:

16 В. П. Найденова. Культ Митры в Нижней Мезии и Фракии.– В кн. "Проблемы античной культуры". М., 1986, с. 56-58; Ю. К. Колосовская. Նշվ. աշխ., էջ 198 :

17 Fr. Cumont. Die Mysterien des Mithra. Leipzig, 1911 (տե՛ս էջ 36, քարտեզը).

18 М. И. Ростовцев. Новая греческая надпись из Эчмиадзина.– "Христианский Восток", т. III, вып. III, Пг., 1915, с. 245-246. Т. Моммзен. История Рима: Провинции от Цезаря до Диоклетиана. Т. V, М., 1949, с. 191.

19 Е. М. Штаерман. Социальные основы религии древнего Рима. М., 1987, с. 21, 233.

20 Նույն տեղում, էջ 227, 249:

ոստիկանությունում անցկացնող, ծանր աշխատանքներից աղատված, որոշակի արտոնություններով օժտված հռոմեական բանակի բենեֆիցիարիուսների նախաձեռնությամբ կայսեր պաշտամունքին սերտորեն միահյուսված «Հավերժական», «Անհաղթ» դիցամարտիկ "Sol Invictus" Միթրային ձոնված զոհասեղան կերտելը:

Վերջերս մենք փորձել ենք հիմնավորել «Բուն պողոտային» հարող Դվին ավանդապահ սրբավայրի ե Ադաթանգեղոսի վկայությամբ նույն տիրույթում գտնվող Տիր-Ապոլոն (հմմտ. հունարեն Ադաթանգեղոսը) աստծու տաճարով «Երազամույն տեղեր» սրբավայրի համատեղելիության հնարավորությունը[21]: Դվին սրբավայրի պաշտամունքային հավաքական նկարագրի ընդհանուր պատկերը չի բացառում այդ հնարավորությունը: Հետևաբար, ելնելով Տիր-Ապոլոն և Ապոլոն-Միթրա[22] հայտնի համադրություններից և Ապոլոնի Θῦραιος (դռների, դարպասների), հատկապես Ἀγυιεύς (փողոցի, ճանապարհի) մականուններից, հնարավոր ենք համարում, որ բենեֆիցիարիուսների ուղեցույց-ուղեկալը, այստեղ ես, ըստ իր դրծառույթի կազմել է մի ամբողջություն դռների, դարպասների ե հատկապես ճանապարհների հովանավոր աստվածության «հուպ ի ճանապարհն» սրբավայրի հետ, որտեղ և դրվել է Միթրային ձոնված զոհասեղանը: Եվ վերջապես, կրոնական սինկրետիզմի պարադայում, անտարակույս, հանդուրժելի պիտի լիներ Տիր-Ապոլոն-Միթրա «լուսակիր եռյակի»[23] համատեղումը Դվին հնավանդ սրբավայրում:

Դվին սրբավայրում հայտնաբերված, Արտաշատի I դ. երկրորդ կեսից–II դ. լայն գործածություն ստացած զանգվածեղ, ելունավոր կղմինդրներից նմանակված բազալտե ծածկասալը (նկ. 5) (հմմտ. անտիկ աշխարհում մարմարե ծածկասալերի ե կալիպտերների > ժամանակին բնորոշ կղմինդրներից)[24] ուղղակիորեն առնչվում է կաթոզիկեի նախնական՝ IV դ. եռանավ շինության հիմքերում վերստին օգտագործված թվով 3 բազալտե սրբատաշ որմնասալերի հետ: Ըստ շինարարական տեկտոնիկայի օրենքների մեծ կշիռ ունեցող բազալտե սալածածկ տանիք կարող էր դրվել բազալտե կառույցի վրա: «Դվինի բազալտաշեն կառույցի» հնարավոր ժամանակն ըստ Արտաշատի համանման ելունավոր կղմինդրների, պետք է փնտրել II դ. տիրույթում և առավել հստակեցնելու համար անհրաժեշտ է

21 Գ. Հ ո ւ ն ա ր յ ա ն. Դվին ամրոց-սրբավայրը Հայոց դարձի նախօրեին.– «Հայոց սրբեր և սրբավայրեր». Երևան, 2001, էջ 289–296:

22 Г. Т и р а ц я н. Вопросы преемственности официального культа в Античной Армении. – «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, №10, էջ 59–60:

23 Գ. Հ ո ւ ն ա ր յ ա ն. Դվին ամրոց-սրբավայրը..., էջ 290: А. Ф. Л о с е в. Античная мифология в ее историческом развитии. М., 1957 с. 296. Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու գիցարանը. Երևան, 2001, էջ 38:

24 В. Б. Г а й д у к е в и ч. Строительные керамические материалы Боспора; Боспорские черепицы. – "Известия Государственной Академии истории материальной культуры" (այսուհետ՝ Известия ГАИМК), вып. 104, М. – Л., 1934, с. 212, 246, 248.

*անդրադառնալ բազալտե հար և նման սալերով (նկ. 6) ծածկված Գառնիի տաճարի կերտման ժամանակին:*

*Հռոմեական կայսրության արևելյան (Փոքր Ասիա, Սիրիա) նահանգների հավաստի թվագրվող հուշարձանների ոճական համեմատական վերլուծությամբ հիմնավորված է, որ որոշակի ինքնատիպությամբ օժտված Գառնիի տաճարը հունահռոմեական ճարտարապետության հուշարձան է: Կայսրության արևելյան նահանգներում ձևավորված հունահռոմեական համադրական ճարտարապետությամբ, այդ նույն նահանգներից դուրս եկած ճարտարապետների հեղինակային հսկողությամբ և տեղի վարպետների մասնակցությամբ իրականացված Գառնիի տաճարի շինարարության գործում որոշիչ դեր է հատկացվում հռոմեացիների ներկայությանն այստեղ՝ Հայաստանում: Դեռ ավելին, տաճարը պարզապես համարվում է դեպի Արևելք հռոմեական էքսպանսիայի վառ օրինակ, հավատարմության երաշխիք կայսրությանը[25] և ուղղակիորեն վերագրվում՝ II դ. երկրորդ կեսին Հայաստանում տևականորեն տեղակայված լեգեոնների ծավալած շինարարական գործունեությանը[26]: Իրավամբ, II դ. երկրորդ կեսին XV և XII լեգեոնների զորամիավորումների կողմից Վաղարշապատում իրականացված նման գործունեությունը փաստագրված է իրենց իսկ թողած լատիներեն վիմագիր արձանագրություններում, ինչպես նաև Մայր տաճարի ավագ խորանի հիմքերի մոտ հայտնաբերված մետաղե ամրակների համար արված խոռոչներով (Գառնի ամրոցի պարսպի քարերը հիշեցնող) բազալտե խոշոր որմնասալի և Ս. Հռիփսիմե եկեղեցու գմբեթակիր որմնամույթերի տակ երբեմնի մոնումենտալ շենքի տուֆե քանդակազարդ (թե՛ բացարձակ չափերով ու համաչափություններով, և թե՛ զարգաքանգակով համանման Գառնիի տաճարի մանրամասերին) քիվի հատվածների առկայությամբ[27]:*

---

25 *Գառնիի տաճարին վերաբերող այս հատվածը ներկայացված է ըստ՝* К. К. Романов. Развалины храма римского типа в Баш-Гарни.— Известия ГАИМК, вып. 100, М.—Л., 1933, с. 650-654; В. Д. Блаватский. Храм в Гарни.— "Всеобщая история архитектуры". Т. II, кн. II, М., 1948, с. 388-391; А. Болтунова. Рец. на книгу К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении.— ВДИ, 1954, N 4, с. 86—93. *Ըստ էության, նման մոտեցում են ցուցաբերում նաև Ն. Մառը, Հ. Ստրժիգովսկին, Հ. Գլյուկը, Ս. Մնացականյանը, Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը. մանրամասնորեն և համապատասխան գրականություն տե՛ս Ա. Ա. Սահինյան. նշվ. աշխ., էջ 23–30:*

26 *Ռ. Վիլկինսոնը ոճաբանական վերլուծությամբ հանգել է քննվող կառույցի՝ մ.թ. II դ. երկրորդ կեսով թվագրմանը և հիմնավորել Կայնեպոլիսում տեղակայված հռոմեական զորքի անմիջական առնչությունը վերջինիս կառուցմանը (տե՛ս* R. D. Wilkinson. A fresh look at the ionic building at Garni.- Revue des etudes armeniennes. T. XVI, Paris, 1982, pp. 221–244)*: Ֆ. Տեր-Մարտիրոսովը ճարտարապետական առանձնահատկությունների մանրակրկիտ վերլուծությունից ելնելով՝ տաճարը թվագրել է «ոչ վաղ քան մ. թ. II դարի կեսեր կամ, ավելի ճիշտ, մ. թ. II դարի երկրորդ կես, որը Արևելքում Հռոմեական կայսրության հզորացման ժամանակաշրջանն է» (Ֆ. Տեր-Մարտիրոսով. Գառնի ամրոցի տաճարը՝ հերեոն, վկայարան. Երևան, 1995, էջ 18-20):*

27 *Ա. Սահինյան. Հայկական ճարտարապետություն ստրկատիրական հասարակարգի ժամանակաշրջանում (VI դ. մ. թ. ա. – V դ. մ. թ.).– Ակնարկ հայ ճարտարապետու-*

Այս բոլորից հետևում է, որ «Դվինի բազալտաշեն կառույցը» ևս անմիջական առնչություն պետք է ունեցած լինի այստեղ II դ. երկրորդ կեսին հռոմեական բանակի բենեֆիցիարիուսների հիմնած պահակակետի հետ: Այս եզրահանգման օգտին է խոսում նաև ծածկասալի և Միթրային ձոնված զոհասեղանի հումքի ըստ պետրոգրաֆիական ու քիմիական անալիզների տվյալների, նույն հանքավայրից (Գառնիի անդեզիտա-բազալտային շերտից)[28] վերցված լինելու պարագան:

Ամփոփենք. տարածաշրջանի ռազմական կարևոր հենակետերում, իսկ Վաղարշապատն ու Գառնին նաև արքայական նստավայրեր էին, ամրաշինականին զուգահեռ ընթացել է և հոգևոր բնույթի կառույցների շինարարություն: Նորակառույցներին ազդեցիկ մոնումենտալություն հաղորդելու նպատակով որպես շինանյութ օգտագործվել է հատկապես բազալտը, որի միայն արդյունահանումն ու մշակումը (մասնավորապես II դ. կեսերին բնորոշ դեկորի շքեղությամբ)[29] մարդկային ու նյութական զգալի միջոցներ և տևական ժամանակ է պահանջել: Նույն այս կառույցներին պաշտամունքային զորություն հաղորդելու և «ռոմանականացված» կրոնական գաղափարախոսություն ու մշակույթ արմատավորելու նպատակով, կրոնական հանդուրժողականության, սինկրետիզմի այս պայմաններում օգտագործվել են իրենց իսկ ռազմական հսկողության տակ գտնվող տեղի ավանդապահ սրբազան տարածքները: Այսինքն, ինչպես նվաճված մյուս երկրներում, այստեղ ևս հռոմեական քաղաքական ագրեսիան զուգորդվել է որոշակի ուղղվածության գաղափարական և մշակութային քաղաքականությամբ: Քանզի II դ. 60-ականներին Հայաստանը նվաճած հռոմեացիների համար քաղաքական խնդիրը հստակ էր՝ Կապադովկիայում, Փոքր Հայքում ունենալով ամրապնդված ապահով թիկունք, նրանք ձգտում էին կայսրության արևելյան սահմանի վրա ունենալ «հռոմեականացված, հռոմեամետ Հայաստան»: Այսուհանդերձ Հայաստանը մնաց ոչ հռոմեական երկիր : Այս հանգամանքը խոստովանում է անգամ եվրոպակենտրոն գաղափարախոսության ջատագով, հռոմեասեր Թեոդոր Մոմզենը, թեպետ և խոսքի ենթատեքստում[30]: Իսկ Գառնիի տաճարը և Վաղարշապատի ու Դվինի նույնաոճ կառույցների ճարտարապետական մանրամասները մնացին որպես հայ-հռոմեական քաղաքական առնչությունների պատմության որոշակի մի

---

*թյան պատմության. Երևան, 1964, էջ 54-55:* Г. А. Т и р а ц я н. К вопросу о градостроительной структуре и топографии древнего Валаршапата. — "Историко-филологический журнал", 1977, № 2, с. 84, 92.

28 *Տե՛ս* Գ. Ք ո չ ա ր յ ա ն. *Դվին III..., էջ 67–68, տախտ. XXIX:*

29 Г. И. С о к о л о в. Расцвет римского искусства (I-II вв.). — В кн.: "Культура древнего Рима". Т. I, М., 1985, с. 409.

30 Т. М о м м з е н. *Նշվ. աշխ., էջ 325–326:*

*ժամանակահատվածի «պետական գաղափարների ամենազորեղ գեղարվեստական արտահայտիչ»*[31] *քարակերտ վավերագրեր:*

*Այսպիսով, բազմաշերտ Դվին ամրոց-սրբավայրի տևական գոյության ընթացքում ուրվագծվում է ևս մի ժամանակահատված՝ II գ. երկրորդ կեսը, որպես վաղ Արշակունյաց շրջանի ցարդ անհայտ հնագիտական շերտի հնարավոր գոյության մասին ակնարկ:*

## ДВИН В РАННЕАРШАКИДСКОЙ ПЕРИОД
(Попытка эскиза)

*ГАЯНЭ КОЧАРЯН*

Р е з ю м е

Материалы арташесидского периода в археологической секвенции Двина изучены и опубликованы достаточно подробным образом. Однако информация о последующем, раннеаршакидском периоде, фрагментарна. Сравнительный анализ ограниченного наличного материала с учетом историко-политической ситуации в регионе в период 30-летней римской оккупации Армении (163—193гг.) позволяет предположить наличие в Двине археологического слоя раннеаршакидского времени, датируемого второй половиной II века.

## DVIN IN THE EARLY ARSHAKID PERIOD
(An attempt to outline)

*GAYANE KOCHARYAN*

S u m m a r y

The materials of Artaxiad period in archaeological sequence of Dvin are studied and published rather sufficiently. Nevertheless, the information on the succeeding early Arshakid period is very fragmentary. The comparative analysis of the limited present corresponding material with the account of historico-political situation in the 30-years period of the Roman occupation of Armenia allows supposing the presence of an archaeological layer of early Arshakid period in Dvin, dating back to the second half of the 2nd century.

31 *Տե՛ս* Г. И. С о к о л о в. *Նշվ. աշխ., էջ 376:*